ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2024թ. հոկտեմբերի 30-ին, N 497-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԻՐ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի, 159-րդ հոդվածի 1-ին մասի, 161-րդ հոդվածի 2-րդ մասի, 164-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով և հիմք ընդունելով Վ. Հարությունյանի 2024 թվականի հոկտեմբերի 29-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի խորհրդական Վահե Հարությունյանին տրամադրել իր ամենամյա արձակուրդը և լրացուցիչ արձակուրդը՝ 2024 թվականի հունվարի 23-ից 2025 թվականի հունվարի 23-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 24 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 4-ը ներառյալ:

2. Վահե Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել մարզպետի խորհրդական Արմեն Գրիգորյանի վրա:

3. Ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարել նաև լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

30.10.2024

X

VERIFIED OCSP 30.10.2024 10:08:47 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ